Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում
Կ-766-23.01.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասում «Կողմերն» բառը փոխարինել «Կողմերը, սույն օրենսգրքի և այլ օրենքների պահանջների պահպանմամբ,» բառերով.

Հոդված 3. Օրենսգրքի 57-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 57. Պետական տուրքը**

1. Պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը, վճարման կարգը, պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

2. Եթե հիմնական պահանջից բացի ներկայացված են ածանցյալ պահանջներ, որոնք հիմնական պահանջի բավարարման դեպքում ենթակա են անվերապահ բավարարման, ապա ածանցյալ պահանջների համար պետական տուրք չի գանձվում:

3. Եթե հայցվորն օրենքով ազատված է պետական տուրքի վճարումից կամ դատարանը կիրառել է նման արտոնություն, ապա պետական տուրքը դատական ակտով բռնագանձվում է պետական տուրքի վճարումից չազատված դատավարության մասնակցից՝ բավարարված պահանջների չափին համամասնորեն:

4. Հայցի առարկան փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասի բռնագանձման հարցը լուծվում է գործն ըստ էության լուծող դատական ակտով:

5. Վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերի առկայության դեպքում դատարանը պարտավոր է դատական ակտում նշել պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու հիմք հանդիսացող հանգամանքները:»:

Հոդված 4. Օրենսգրքի 61-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 61. Դատական ծանուցումը

1. Դատավարության մասնակիցները, վկաները, փորձագետները, և թարգմանիչները սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում են դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին:

2. Դատավարության մասնակցի կողմից իր ներկայացուցչին ծանուցելու, դատավարական փաստաթղթերը ներկայացուցչին հանձնելու վերաբերյալ դիմում ներկայացվելու կամ ծանուցումներն ու դատավարական փաստաթղթերը ստանալու լիազորություն ներկայացուցչին վերապահելու մասին լիազորագրում հատուկ նշում առկա լինելու դեպքում ծանուցվում է միայն ներկայացուցիչը:

3. Սույն օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-9-րդ մասերով նախատեսված ներկայացուցչության դեպքերում ծանուցվում է դատավարության մասնակցի ներկայացուցիչը:»:

Հոդված 5. Օրենսգրքի 73-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 2-րդ կետի «բնակության (գտնվելու) վայրը» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով և «բնակության վայրից» բառերը փոխարինել «հաշվառման վայրի հասցեից» բառերով.

2) 3-րդ կետի «բնակության (գտնվելու) վայրը» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով՝

«2.1. Սույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձի ներկայացրած հայցադիմումը պետք է պարունակի նշում այն մասին, թե վարչական մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ պետության կամ համայնքի որ իրավունքներն են խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, և վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:»:

Հոդված 6. Օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասում «մշտական բնակության վայրը» բառերը փոխարինել «հաշվառման վայրի հասցեն» բառերով:

Հոդված 7. Օրենսգրքի 80-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասից հանել «և երրորդ անձին» բառերը.

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացվելու դեպքում դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են սույն օրենսգրքով նախատեսված հայցադիմումը վերադարձնելու հիմքերը: Այս դեպքում հայցադիմումը համարվում է դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:»:

Հոդված 8. Օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «բնակության (գտնվելու) վայրը» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով, իսկ «բնակության վայրից» բառերը «հաշվառման վայրի հասցեն» բառերով:

Հոդված 9. Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասը «կատարումը» բառից հետո լրացնել «կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 95-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1. Բացի սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքից, դատարանը վերսկսում է գործի վարույթը, եթե գործի վարույթը կասեցնելուց հետո ի հայտ է եկել գործի վարույթը կարճելու հիմք:»:

Հոդված 11. Օրենսգրքի 118-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 3-րդ նախադասության 2-րդ՝ «117-րդ հոդվածի 1.1-ին մասով» բառերը փոխարինել «118.2-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերով:

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Դատարանի կողմից սույն մասով նախատեսված գործողությունները սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին հոդվածով նախատեսված գործերով կատարելը բավարար է սույն օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի շրջանակներում պահանջվող բոլոր գործողությունները կատարված համարելու համար:»:

Հոդված 12. Օրենսգրքի 121-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 121. Արագացված դատաքննության կարգը և ժամկետները**

1. Արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշման կայացման պահից դատարանն անցնում է գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացմանը:

2. Գործն ըստ էության լուծող դատական ակտը պետք է հրապարակվի ոչ ուշ, քան արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշման կայացման օրվանից տասնհինգօրյա ժամկետում, եթե սույն օրենսգրքով այլ ժամկետ նախատեսված չէ:

3. Գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը նշվում են արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշման մեջ:»:

Հոդված 13. Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, վճռի պարզաբանման» բառերը, իսկ 131-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից՝ «, վճռի պարզաբանումը մերժելու» բառերը:

Հոդված 14. Օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերով, 9-րդ կետով (բացառությամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի), և 10-11-րդ կետերով նախատեսված միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց հինգ օր հետո՝ եթե դրանց դեմ սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք չի ներկայացվում: Վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից և կարող են բողոքարկվել դրանք ստանալուց հետո հնգօրյա ժամկետում:»:

Հոդված 15. Օրենսգրքի 128-րդ հոդվածի վերնագրում և հոդվածի ամբողջ տեքստում «լրացուցիչ» բառերը փոխարինել «մասնավոր» բառերով:

Հոդված 16. Օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) սույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացրել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է:»:

Հոդված 17. Օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «կամ սույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացրել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է» բառերը:

Հոդված 18. Օրենսգրքի 144-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1.-ին մասով.

«2.1.Վերաքննիչ դատարանի կողմից ընդունման ենթակա չեն սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված գործերով սույն օրենսգրքով սահմանված ժամկետում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավարության մասնակիցը ներկայացնում է բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական դատարան ներկայացնելու հնարավորությունից:»:

Հոդված 19. Օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը, բավարարելով բողոքը, վերացնում է վարչական դատարանի միջանկյալ դատական ակտը կամ անհրաժեշտության դեպքում կայացնում է նոր դատական ակտ կամ մերժում է վերաքննիչ բողոքը՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերով, 9-րդ կետով (բացառությամբ վարչական

ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի), և 10-11-րդ կետերով նախատեսված միջանկյալ դատական ակտերը թողնելով անփոփոխ, իսկ 9-րդ կետով նախատեսված՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերը թողնում է օրինական ուժի մեջ:»:

Հոդված 20. Օրենսգրքի 147-րդ հոդվածի վերնագրում և հոդվածի ամբողջ տեքստում «լրացուցիչ» բառերը փոխարինել «մասնավոր» բառերով:

Հոդված 21. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 147.1-ին հոդվածով.

«**Հոդված 147.1 Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղումը, լրացուցիչ որոշումը**

1. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա վրիպակների, գրասխալների, թվաբանական սխալների ուղղման, և լրացուցիչ որոշման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղմանը և լրացուցիչ որոշմանը վերաբերող համապատասխան կանոնները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 22. Օրենսգրքի 148-րդ հոդվածի՝

1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերով, 9-րդ կետով (բացառությամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի), և 10-11-րդ կետերով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց 5 օր հետո՝ եթե դրանց դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք չի ներկայացվում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-9-րդ մասերով.#

«8. Վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից և կարող են բողոքարկվել դրանք ստանալուց հետո հնգօրյա ժամկետում»:

9. Սույն օրենսգրքի 136-րդ և 137-րդ հոդվածներով նախատեսված վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց հինգ օր հետո՝ եթե դրանց դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք չի ներկայացվում:»:

Հոդված 23. Օրենսգրքի 149-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը «կարգով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի » բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«2. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշումը հրապարակվում է գործի քննությունն ավարտվելուց հետո քսան օրվա ընթացքում:»:

Հոդված 24. Օրենսգրքի 152-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, և 9-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:»:

Հոդված 25. Օրենսգրքի 158-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 4-րդ կետից հանել «, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը և դրանց հիմնավորումները» բառերը,

2) 3-րդ մասից հանել «, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքի առկայությունը» բառերը:

Հոդված 26. Օրենսգրքի 160-րդ հոդվածի՝

«1) 1-ին մասի 1-ին կետից հանել «բացակայում է կամ» բառերը:

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) չեն վերացվել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները կամ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ են տրվել նոր խախտումներ:»:

3) 2-րդ մասում «հոդվածի պահանջներին» բառերից հետո լրացնել «, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, կամ դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը» բառերը.

4) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքի, նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին բերվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը կայացվում է վճռաբեկ բողոքը հետ վերցնելու մասին դիմումը բողոք բերող անձի կողմից ներկայացնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:»:

Հոդված 27. Օրենսգրքի 165-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«2. Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի և վերաքննիչ դատարանում բողոքարկված՝ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները քննվում են դրանք վարույթ ընդունելուց հետո երկու ամսվա ընթացքում:»:

Հոդված 28. Օրենսգրքի 166.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 166.1 Վճռաբեկ դատարանում բողոքի քննության կարգը**

1. Վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում բողոք բերած անձը և գործին մասնակցող մյուս անձինք ծանուցվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

2. Դատական նիստը նախագահողը նշանակված ժամին բացում է դատական նիստը և հայտարարում դատարանի կազմը, քննության ենթակա գործը:

3. Նախագահողը պարզում է դատավարության մասնակիցների ներկայությունը, ստուգում վերջիններիս ներկայացուցիչների լիազորությունները, նիստին ներկա դատավարության մասնակիցներին պարզաբանում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կարգը դատական նիստում: Պատշաճ ծանուցված դատավարության մասնակցի չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար:

4. Բողոքի քննությունը սկսվում է զեկուցող դատավորի զեկուցումով: Զեկուցողը ներկայացնում է վճռաբեկ բողոքը և վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները:

5. Բողոքի քննությանը մասնակցող դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին և նիստին ներկայացած գործին մասնակցող անձանց, որից հետո նիստը նախագահողը բողոքի քննությունը հայտարարում է ավարտված:»:

Հոդված 29. Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերով, 9-րդ կետով՝ բացառությամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի, և 10-11-րդ կետերով նախատեսված միջանկյալ դատական ակտերը թողնելով անփոփոխ, իսկ 9-րդ կետով նախատեսված՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը թողնում է օրինական ուժի մեջ, կամ անհրաժեշտության դեպքում կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»:

Հոդված 30. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 171.1-ին հոդվածով.

«**Հոդված 171.1 Վճռաբեկ դատարանի որոշման մեջ առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղումը**

1. Վճռաբեկ դատարանի որոշման մեջ առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 31. Օրենսգրքի 181-րդ հոդվածի ամբողջ տեքստում «բողոք բերած» բառերը փոխարինել «դիմում ներկայացրած» բառերով:

Հոդված 32. Օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր

իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:»:

Հոդված 33. Օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասում «պաշտոնապես հրապարակվում է այն տեղեկագրում, որում, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հրապարակվում է անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի տվյալ տեսակը» բառերը փոխարինել «դատարանը ուղարկում է ՀՀ արդարադատության նախարարություն՝ նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում դրա պաշտոնական հրապարակումն իրականացնելու համար» բառերով:

Հոդված 34. Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ մասում «բնակության (գտնվելու) վայրը» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով, իսկ «բնակության վայրից» բառերը՝ «հաշվառման վայրի հասցեից» բառերով:

Հոդված 35. Օրենսգրքի 31-րդ գլուխը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 36. Օրենսգրքի 222.5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «բնակության վայրը» բառերը փոխարինել «հաշվառման վայրի հասցեն» բառերով, իսկ «բնակության վայրից» բառերը՝ «հաշվառման վայրի հասցեից» բառերով :

Հոդված 37. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին և 35-րդ հոդվածներն ուժի մեջ մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը և 18-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունիսի 1-ից:

4. Սույն օրենքի 14-րդ, 17-րդ, 22-րդ և 29-րդ հոդվածներով նախատեսված դրույթները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ընդունվող միջանկյալ դատական ակտերի վրա:

5. Սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետը տարածվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված վերաքննիչ բողոքների քննության վրա:

6. Սույն օրենքի 25-րդ և 26-րդ հոդվածները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված վճռաբեկ բողոքների քննության վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենսգրքի ~~2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)~~ 18-րդ հոդվածի 1-ին մասում «Կողմերն» բառը փոխարինել «Կողմերը, սույն օրենսգրքի և այլ օրենքների պահանջների պահպանմամբ,» բառերով.

Հոդված 32. Օրենսգրքի 57-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 57. Պետական տուրքը**

1. Պետական տուրքի գանձման օբյեկտները, պետական տուրքի չափը, վճարման կարգը, պետական տուրքի վճարումից ազատելու, պետական տուրքի վճարումը հետաձգելու, պետական տուրքը և դրա դրույքաչափը նվազեցնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

~~2. Դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չի գանձվում:~~

~~3~~2. Եթե հիմնական պահանջից բացի ներկայացված են ածանցյալ պահանջներ, որոնք հիմնական պահանջի բավարարման դեպքում ենթակա են անվերապահ բավարարման, ապա ածանցյալ պահանջների համար պետական տուրք չի գանձվում:

34. Եթե հայցվորն օրենքով ազատված է պետական տուրքի վճարումից կամ դատարանը կիրառել է նման արտոնություն, ապա պետական տուրքը դատական ակտով բռնագանձվում է պետական տուրքի վճարումից չազատված դատավարության մասնակցից՝ բավարարված պահանջների չափին համամասնորեն:

45. Հայցի առարկան փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասի բռնագանձման հարցը լուծվում է գործն ըստ էության լուծող դատական ակտով:

56. Վճարված պետական տուրքի վերադարձման հիմքերի առկայության դեպքում դատարանը պարտավոր է դատական ակտում նշել պետական տուրքը լրիվ կամ մասնակի վերադարձնելու հիմք հանդիսացող հանգամանքները:»:

Հոդված 43. Օրենսգրքի 61-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 61. Դատական ծանուցումը

1. Դատավարության մասնակիցները, վկաները, փորձագետները, և թարգմանիչները սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանուցվում են դատական

նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ առանձին դատավարական գործողություններ կատարելու մասին:

2. Դատավարության մասնակցի կողմից իր ներկայացուցչին ծանուցելու, դատավարական փաստաթղթերը ներկայացուցչին հանձնելու վերաբերյալ դիմում ներկայացվելու կամ ծանուցումներն ու դատավարական փաստաթղթերը ստանալու լիազորություն ներկայացուցչին վերապահելու մասին լիազորագրում հատուկ նշում առկա լինելու դեպքում ծանուցվում է միայն ներկայացուցիչը:

3. Սույն օրենսգրքի 22-րդ հոդվածի 3-9-րդ մասերով նախատեսված ներկայացուցչության դեպքերում ծանուցվում է դատավարության մասնակցի ներկայացուցիչը:»:

Հոդված 54. Օրենսգրքի 73-րդ հոդվածի՝

4) 2-րդ մասի 2-րդ կետի «բնակության (գտնվելու) վայրը» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով և «բնակության վայրից» բառերը փոխարինել «հաշվառման վայրի հասցեից» բառերով.

5) 3-րդ կետի «բնակության (գտնվելու) վայրը» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով՝

«2.1. Սույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձի ներկայացրած հայցադիմումը պետք է պարունակի նշում այն մասին, թե վարչական մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ պետության կամ համայնքի որ իրավունքներն են խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, և վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով:»:

Հոդված ~~5~~6. Օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասում «մշտական բնակության վայրը» բառերը փոխարինել «հաշվառման վայրի հասցեն» բառերով:

Հոդված 7~~6~~. Օրենսգրքի 80-րդ հոդվածի՝

5) 3-րդ մասից հանել «և երրորդ անձին» բառերը.

6) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացվելու դեպքում դատարանը հայցադիմումն ընդունում է վարույթ, եթե բացակայում են սույն օրենսգրքով նախատեսված հայցադիմումը վերադարձնելու հիմքերը: Այս դեպքում հայցադիմումը համարվում է դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:»:

Հոդված 8~~7~~. Օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «բնակության (գտնվելու) վայրը» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով, իսկ «բնակության վայրից» բառերը «հաշվառման վայրի~~ց~~ հասցեն» բառերով:

Հոդված 9~~8~~. Օրենսգրքի 91-րդ հոդվածի 1-ին մասը «կատարումը» բառից հետո լրացնել «կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի փաստացի կամ իրավական վիճակի փոփոխության կամ էական վնաս հասցնել միջնորդություն ներկայացնող անձին» բառերով:

Հոդված 10~~9~~. Օրենսգրքի 95-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1. Բացի սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքից, դատարանը վերսկսում է գործի վարույթը, եթե գործի վարույթը կասեցնելուց հետո ի հայտ է եկել գործի վարույթը կարճելու հիմք:»:

~~**Հոդված 10.** Օրենսգրքի 114-րդ հոդվածի 6-րդ մասը «պաշտոնական կայքի միջոցով» բառերից հետո լրացնել «, իսկ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում, նաև դատական նիստում» բառերով:~~

Հոդված 11. Օրենսգրքի 118-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի 3-րդ նախադասության 2-րդ՝ «117-րդ հոդվածի 1.1-ին մասով» բառերը փոխարինել «118.2-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերով:

2) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությունով.

«Դատարանի կողմից սույն մասով նախատեսված գործողությունները սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին հոդվածով նախատեսված գործերով կատարելը բավարար է սույն օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված գործի փաստերն ի պաշտոնե պարզելու սկզբունքի շրջանակներում պահանջվող բոլոր գործողությունները կատարված համարելու համար:»:

Հոդված 12. Օրենսգրքի 121-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 121. Արագացված դատաքննության կարգը և ժամկետները**

1. Արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշման կայացման պահից դատարանն անցնում է գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացմանը:

2. Գործն ըստ էության լուծող դատական ակտը պետք է հրապարակվի ոչ ուշ, քան արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշման կայացման օրվանից տասնհինգօրյա ժամկետում, եթե սույն օրենսգրքով այլ ժամկետ նախատեսված չէ:

3. Գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման ժամանակը և վայրը նշվում են արագացված դատաքննություն կիրառելու մասին որոշման մեջ:»:

Հոդված 13. Օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, վճռի պարզաբանման» բառերը, իսկ 131-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից՝ «, վճռի պարզաբանումը մերժելու» բառերը:

Հոդված 14. Օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11. Վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերով, 9-րդ կետով (բացառությամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի), և 10-11-րդ կետերով նախատեսված միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց հինգ օր հետո՝ եթե դրանց դեմ սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք չի ներկայացվում: Վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից և կարող են բողոքարկվել դրանք ստանալուց հետո հնգօրյա ժամկետում:»:

Հոդված 15. Օրենսգրքի 128-րդ հոդվածի վերնագրում և հոդվածի ամբողջ տեքստում «լրացուցիչ» բառերը փոխարինել «մասնավոր» բառերով:

Հոդված 16. Օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) սույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացրել է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է:»:

Հոդված 17. Օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «կամ սույն օրենսգրքի 136-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում ներկայացրել է

պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու միջնորդություն, որը մերժվել է» բառերը:

Հոդված 18. Օրենսգրքի 144-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1.-ին մասով.

«2.1.Վերաքննիչ դատարանի կողմից ընդունման ենթակա չեն սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1.-ին մասով նախատեսված գործերով սույն օրենսգրքով սահմանված ժամկետում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքերի, երբ դատավարության մասնակիցը ներկայացնում է բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված է եղել նշված ապացույցները վարչական դատարան ներկայացնելու հնարավորությունից:

Հոդված 19~~18~~. Օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը, բավարարելով բողոքը, վերացնում է վարչական դատարանի միջանկյալ դատական ակտը կամ անհրաժեշտության դեպքում կայացնում է նոր դատական ակտ կամ մերժում է վերաքննիչ բողոքը՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերով, 9-րդ կետով (բացառությամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի), և 10-11-րդ կետերով նախատեսված միջանկյալ դատական ակտերը թողնելով անփոփոխ, իսկ 9-րդ կետով նախատեսված՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերը թողնում է օրինական ուժի մեջ:»:

Հոդված 20~~19~~. Օրենսգրքի 147-րդ հոդվածի վերնագրում և հոդվածի ամբողջ տեքստում «լրացուցիչ» բառերը փոխարինել «մասնավոր» բառերով:

Հոդված 2120. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 147.1-ին հոդվածով.

«**Հոդված 147.1 Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղումը, լրացուցիչ որոշումը**

1. Վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա վրիպակների, գրասխալների, թվաբանական սխալների ուղղման, և լրացուցիչ որոշման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղմանը և լրացուցիչ որոշմանը վերաբերող համապատասխան կանոնները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 2122. Օրենսգրքի 148-րդ հոդվածի՝

1) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերով, 9-րդ կետով (բացառությամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի), և 10-11-րդ կետերով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց 5 օր հետո՝ եթե դրանց դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք չի ներկայացվում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-9-րդ մասերով.#

«8. Վարչական դատարանի՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից և կարող են բողոքարկվել դրանք ստանալուց հետո հնգօրյա ժամկետում»:

9. Սույն օրենսգրքի 136-րդ և 137-րդ հոդվածներով նախատեսված վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոքի ընդունումը մերժելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց հինգ օր հետո՝ եթե դրանց դեմ սահմանված ժամկետում վճռաբեկ բողոք չի ներկայացվում:»:

Հոդված ~~22~~23. Օրենսգրքի 149-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը «կարգով» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի » բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«2. Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող որոշումը հրապարակվում է գործի քննությունն ավարտվելուց հետո քսան օրվա ընթացքում:»:

Հոդված ~~23~~24. Օրենսգրքի 152-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Անկախ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ դատական ակտը ենթակա է բեկանման, եթե առկա են սույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, և 9-րդ կետերով սահմանված՝ դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը:»:

Հոդված 25~~24~~. Օրենսգրքի 158-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 4-րդ կետից հանել «, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը և դրանց հիմնավորումները» բառերը,

2) 3-րդ մասից հանել «, ինչպես նաև նոր կամ նոր երևան եկած հանգամանքի առկայությունը» բառերը:

Հոդված ~~25~~26. Օրենսգրքի 160-րդ հոդվածի՝

«1) 1-ին մասի 1-ին կետից հանել «բացակայում է կամ» բառերը:

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6) չեն վերացվել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները կամ բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ են տրվել նոր խախտումներ:»:

7) 2-րդ մասում «հոդվածի պահանջներին» բառերից հետո լրացնել «, վճռաբեկ բողոքը բերվել է սահմանված ժամկետը լրանալուց հետո, և բացակայում է բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, կամ դատարանը մերժել է պետական տուրքի գծով արտոնություն սահմանելու վերաբերյալ միջնորդությունը» բառերը.

8) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Վճռաբեկ բողոքը վերադարձնելու կամ առանց քննության թողնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում գործը վճռաբեկ դատարանում ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքի, նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին բերվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին: Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը կայացվում է վճռաբեկ բողոքը հետ վերցնելու մասին դիմումը բողոք բերող անձի կողմից ներկայացնելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում:»:

Հոդված ~~27~~**26**. Օրենսգրքի 165-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«2. Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի և վերաքննիչ դատարանում բողոքարկված՝ վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները քննվում են դրանք վարույթ ընդունելուց հետո երկու ամսվա ~~45 օրվա~~ ընթացքում:»:

Հոդված ~~27~~**28**. Օրենսգրքի 166.1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**Հոդված 166.1 Վճռաբեկ դատարանում բողոքի քննության կարգը**

1. Վճռաբեկ բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ որոշում կայացվելու դեպքում բողոք բերած անձը և գործին մասնակցող մյուս անձինք ծանուցվում են դատական նիստի ժամանակի և վայրի մասին:

2. Դատական նիստը նախագահողը նշանակված ժամին բացում է դատական նիստը և հայտարարում դատարանի կազմը, քննության ենթակա գործը:

3. Նախագահողը պարզում է դատավարության մասնակիցների ներկայությունը, ստուգում վերջիններիս ներկայացուցիչների լիազորությունները, նիստին ներկա դատավարության մասնակիցներին պարզաբանում է նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև կարգը դատական նիստում: Պատշաճ ծանուցված դատավարության մասնակցի չներկայանալն արգելք չէ բողոքի քննության համար:

4. Բողոքի քննությունը սկսվում է զեկուցող դատավորի զեկուցումով: Զեկուցողը ներկայացնում է վճռաբեկ բողոքը և վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները:

5. Բողոքի քննությանը մասնակցող դատավորներն իրավունք ունեն հարցեր տալու զեկուցողին և նիստին ներկայացած գործին մասնակցող անձանց, որից հետո նիստը նախագահողը բողոքի քննությունը հայտարարում է ավարտված:»:

Հոդված ~~28~~29. Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Միջանկյալ դատական ակտերի վերանայման արդյունքում վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ սույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 1-8-րդ կետերով, 9-րդ կետով՝ բացառությամբ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտերի, և 10-11-րդ կետերով նախատեսված միջանկյալ դատական ակտերը թողնելով անփոփոխ, իսկ 9-րդ կետով նախատեսված՝ վարչական ակտի կատարումը կասեցնելու մասին միջանկյալ դատական ակտի դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի կայացրած

որոշումը թողնում է օրինական ուժի մեջ, կամ անհրաժեշտության դեպքում կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից»:

Հոդված ~~29~~30. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 171.1-ին հոդվածով.

«**Հոդված 171.1 Վճռաբեկ դատարանի որոշման մեջ առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղումը**

2. Վճռաբեկ դատարանի որոշման մեջ առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե սույն օրենսգրքով այլ բան նախատեսված չէ:»:

Հոդված 31~~30~~. Օրենսգրքի 181-րդ հոդվածի ամբողջ տեքստում «բողոք բերած» բառերը փոխարինել «դիմում ներկայացրած» բառերով:

Հոդված 32~~31~~. Օրենսգրքի 191-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:»:

Հոդված ~~32~~33. Օրենսգրքի 200-րդ հոդվածի 1-ին մասում «պաշտոնապես հրապարակվում է այն տեղեկագրում, որում, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, հրապարակվում է անվավեր ճանաչված նորմատիվ իրավական ակտի տվյալ տեսակը» բառերը

փոխարինել «դատարանը ուղարկում է ՀՀ արդարադատության նախարարություն՝ նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում դրա պաշտոնական հրապարակումն իրականացնելու համար» բառերով:

Հոդված 3433. Օրենսգրքի 215-րդ հոդվածի 4-րդ մասում «բնակության (գտնվելու) վայրը» բառերը փոխարինել «հաշվառման (գտնվելու) վայրի հասցեն» բառերով, իսկ «բնակության վայրից» բառերը՝ «հաշվառման վայրի ց հասցեից» բառերով:

Հոդված 35. Օրենսգրքի 31-րդ գլուխը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3436. Օրենսգրքի 222.5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «բնակության վայրը» բառերը փոխարինել «հաշվառման վայրի հասցեն» բառերով, իսկ «բնակության վայրից» բառերը՝ «հաշվառման վայրի հասցեից» բառերով :

Հոդված 3537. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին և 35-րդ հոդվածներն ուժի մեջ մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը և 18-րդ հոդվածը ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունիսի 1-ից:

42. Սույն օրենքի 14-րդ, 17-րդ, 2122-րդ և 2931-րդ հոդվածներով նախատեսված դրույթները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ընդունվող միջանկյալ դատական ակտերի վրա:

53. Սույն օրենքի 2221-րդ հոդվածի 2-րդ կետը տարածվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված վերաքննիչ բողոքների քննության վրա:

64. Սույն օրենքի 25 ~~24~~-րդ և 26 ~~25~~-րդ հոդվածները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված վճռաբեկ բողոքների քննության վրա: